

## «Տնտեսության պետական կարգավորում» մագիստրոսական ծրագիր

### **Ընդհանուր տեղեկություն**

«Տնտեսության պետական կարգավորում» (State regulation of Economy Master's degree program) մագիստրոսական ծրագիրը նպատակաուղղված է աշխատանքի շուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան տնտեսագիտության, ներառյալ՝ տնտեսության և նրա բոլոր ոլորտների պետական կարգավորման բնագավառներում տնտեսագետի լայն ունակությունների ձևավորմանը:

Տնտեսության պետական կարգավորման մասնագետը մի կողմից տիրապետում է պետական կառավարման մարմիններում տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման, տնտեսության և նրա բոլոր ոլորտների պետական կարգավորման հմտություններին, մյուս կողմից օժտված է անհատական հետազոտական հատկանիշներ և բարձր որակավորում ունեցող տնտեսագետի ունակություններով, որոնք անհրաժեշտ են պետական և մասնավոր հատվածի հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, հետազոտական կենտրոնների, միջազգային կազմակերպությունների գործընթացների կազմակերպման և ոլորտում մասնագիտական, հետազոտական, խորհրդատվական, փորձագիտական և կառավարչական գործունեություն ծավալելու կամ նախարարություններում և մյուս գերատեսչություններում զարգացման ծրագրերի գործընթացներում ներգրավվելու համար:

Շրջանավարտին շնորհվում է «Տնտեսագիտության մագիստրոս» որակավորում: Ծրագիրը մշակվել է պետական կառավարման և հետազոտական, փորձագիտական ոլորտների և մասնավոր հատվածի մասնագետների ակտիվ մասնակցությամբ և միտված է տնտեսագիտության լայն բնագավառի ղեկավարման փորձի նորագույն զարգացումներին:

Ծրագրի տևողությունը 1.5 տարի է, դասապրոցները նախատեսվում է իրականացնել շաբաթական երեք անգամ, երեկոյան ժամերի: Մասնագիտական դասընթացներից հետո մագիստրոսը համապատասխան փորձառություն է անցնում պետական և մասնավոր հատվածների գործատու կազմակերպություններում՝ ծանոթանալով դասընթացների շրջանակերում ուսումնասիրված նյութի գործնական կիրառական ասպեկտների հետ:

Ծրագրի շրջանակներում որպես դասախոսներ ներգրավվելու են համալսարանի լավագույն դասախոսներ: Ակնկալվում է հրավիրյալ դասախոսների ներգրավում, ինչպես նաև՝ ուսանողների մասնակցություն ոլորտի բազմաբնույթ միջոցառումներին: Ուսումնական գործընթացի համար, բացի ՀՊՏՀ

ենթակառուցվածքներից, կկիրառվեն նաև պետական և մասնավոր հատվածի կազմակերպությունների ենթակառուցվածքները, տեխնոլոգիական հնարավորությունները ու գրադարանային և ուսումնական ռեսուրսները:

Ուսման վճարը մեկ տարվա համար 700.000 ՀՀ դրամ է: Քանի որ ծրագրի տևողությունն ընդամենը 1.5 տարի է, ամբողջ ծրագրի տևողության արժեքը նույնպես կազմում է 1 մլն. 50 հզ. ՀՀ դրամ:

***Մասնագիտության նկարագիր***

«Տնտեսության պետական կարգավորում»(State regulation of Economy Master's degree program)մագիստրոսական կրթական ծրագիրը պատրաստում է պետական և մասնավոր հատվածի կազմակերպություններում մասնագիտական խորը գիտելիքներով, հմտություններով և կարողություններով օժտված, անհատական հետազոտական և ղեկավարման հատկանիշներ և բարձր որակավորում ունեցող տնտեսագետներ:

Տնտեսության պետական կարգավորում իրականացվում է աշխարհի բոլոր երկրներում: Ներկայիս իրավիճակում առկա է տնտեսության բոլոր բնագավառներում տնտեսության պետական կարգավորման տարբեր ուղղություններով աշխատանքների իրականացման, տնտեսական վերլուծության և կանխատեսումների, տնտեսական որոշումների կայացման և ծրագրերի իրականացման ունակությունների պրակտիկ կիրառման մեծ պահանջ: Տնտեսության պետական կարգավորումը տնտեսագիտության կարևոր և ժամանակակից ոլորտներից է, որի դերը ավելի է մեծացել համաշխարհային ճգնաժամերի ներկայիս պայմաններում:

Կրթական ծրագրի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ընդգրկում է լայն բնագավառի գիտելիքներ և ունիվերսալ ունակություններ: «Տնտեսության պետական կարգավորում» կրթական ծրագիրը միջգիտակարգային է և ներառում է՝ տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման, տնտեսական վերլուծության և հետազոտությունների, տնտեսական կանխատեսումների իրականացման, ֆինանսների, հարկային, բյուջետային, դրամավարկային, արժույթային, թվային և համակարգչային գիտությունների կիրառման, էկոնոմետրիկայի, ինովացիոն, արտաքին տնտեսական, սոցիալական, տարածքային, ներդրումային և տնտեսության բազմաթիվ այլ ոլորտներ:

«Տնտեսության պետական կարգավորում» կրթական ծրագրի շրջանավարտները համապատասխանում են աշխատանքի շուկայի ժամանակակից պահանջներին և մշտապես զբաղեցնում են ՀՀ պետական կառավարման բոլոր մարմիններում տարբեր բարձր պաշտոններ (նախարարներ, փոխնախարարներ, վարչությունների և բաժինների պետեր, առաջատար և գլխավոր մասնագետներ, կոմիտեների նախագահներ, Կենտրոնական բանկի պաշտոնյաներ, միջազգային կազմակերպությունների մասնագետներ, փորձագետներ, մարզպետներ, համայնքապետներ և այլն) և տնտեսության մասնավոր հատվածի բոլոր ճյուղերի ընկերություններում և կազմակերպություններում տարբեր պաշտոններ, պետական

մարմինների հետ աշխատող հասարակական կազմակերպություններում, հետազոտական կենտրոններում և կրթական հաստատություններում:  
«Տնտեսության պետական կարգավորում» կրթական ծրագիրը մշակվել է տնտեսագիտության գծով մագիստրոսի որակավորման աստիճանով մասնագետների պատրաստման նկատմամբ՝ «Տնտեսագիտություն» մասնագիտության շրջանակներում: Ծրագիրը մշակվել է պետական կառավարման և հետազոտական, փորձագիտական ոլորտների ու մասնավոր հատվածի մասնագետների ակտիվ մասնակցությամբ և միտված է տնտեսագիտության լայն բնագավառի մասնագիտական փորձի նորագույն զարգացումներին:

### ***Աշխատանքի հնարավորություններ***

Ծրագրի շրջանավարտները կարող են զբաղեցնել տնտեսագետի, տնտեսագետ-վերլուծաբանի, տնտեսագետ փորձագետի, հետազոտողի, էկոնոմետրիստի, առաջատար և գլխավոր մասնագետի և այլ պաշտոններ, ինչպես նաև հանրային ծառայության ղեկավար և մասնագիտական պաշտոններ, համայնքային ծառայության, մաքսային ծառայության և հարկային ծառայության պաշտոններ՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, նախարարություններում և գերատեսչություններում, ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ տնտեսական մրցակցության ապահովման, ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման պետական հանձնաժողովների, ՀՀ վիճակագրական կոմիտեի աշխատակազմերում, ֆինանսական հատվածի կազմակերպություններում, այդ թվում՝ առևտրային բանկերում, արտադրական ձեռնարկություններում, տնտեսության ճյուղերի տարբեր մասնավոր ընկերություններում, խորհրդատվական ընկերություններում, հետազոտական կենտրոններում, հասարակական կազմակերպություններում, կրթական հաստատություններում և միջազգային կազմակերպություններում: